ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԸ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ

Գրաբարի ստորադասական եղանակը հին հայերենի բայական համակարգի ամենահետաքրքիր եղանակներից մեկն է և մշտապես մնում է քերականների ուշադրության կենտրոնում՝ պայմանավորված իմաստագործառական այն առանձնահատկություններով, որոնք բնութագրական են այս եղանակի բայածևերին: Ստորադասական եղանակի բայածևերի ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ եղել է տարակերպ[1], որովհետև նրանց բնորոշ է քերականական բազմիմաստությունը մի կողմից և ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիների՝ նույն եղանակաժամանակային իմաստներով գործառությունը մյուս կողմից: Նրանք կազմվում են ներկայի և անցյալ կատարյալի հիմքերից և անշուշտ պետք է ունենային իմաստագործառական առանձնահատկություններ, որոնց անդրադարձը կատարվել է հայ քերականագիտության մեջ[2]:

Լեզվաբանները տարբեր մոտեցում են ունեցել առաջին և երկրորդ ապառնիների եղանակային առանձնահատկությունների նկատմամբ: Երկրորդ ապառնին մի խումբ լեզվաբանների կարծիքով սահմանական եղանակի ժամանակածև է. նույնիսկ միևնույն հեղինակի մոտ է այս խնդիրը տարբեր լուծումներ ստացել: Այսպես Մ.Աբեղյանը «Գրաբարի համառոտ քերականութիւն» աշխատության մեջ այն դնում է սահմանականի մեջ[3], իսկ «Գրաբարի քերականութիւն» աշխատության մեջ այն համարում է ստորադասական եղանակի ժամանակածև[4]: Ս.Ղազարյանը «Գրաբարի դասագրքում» այն դնում է սահմանականի մեջ, իսկ «Հայոց լեզվի համառոտ պատմության» մեջ՝ ստորադասականի մեջ[5]: Ստորադասական եղանակի յուրաքանչյուր բայածև ուներ հնարավոր երեք քերականական իմաստ՝ ըղձական, պայմանական, հարկադրական ապառնի, ինչպես նաև սահմանական ապառնու իմաստ, որ բնորոշ էր ստորադասական երկրորդ ապառնու բայածևերին: Գրաբարով գրող յուրաքանչյուր հեղինակի գրչի տակ գրաբարի բայական հարացույցի

բայածները ոչ միայն հին հայերենի եղանակաժամանակային համակարգի օրինաչափությունների կրողներ և դրսևորողներ էին, այլև լեզվաոճական որոշակի մթնոլորտ էին ստեղծում՝ պայմանավորված նյութի բովանդակությամբ և գրողի անհատականությամբ[6]:

Լեզվաոճական առանձնահատկությունների տեսակետից Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը մի այնպիսի ստեղծագործություն է, որի յուրաքանչյուր գլխում, ենթագլխում, տողում անգամ ակնհայտ լեզվական օրինաչափությունների կողքին սպասելի են բայածների իմաստա-գործառական այնպիսի իրողություններ, որոնք հատուկ կարող էին լինել միայն Նարեկացու աստվածատուր գրչին:

Ստորադասական եղանակի բայածները Նարեկացու «Մատեանին» բնորոշ են, քանզի «պոեմի վեհ ու վերամբարձ բովանդակությանը համապատասխան» նրա լեզուն ևս պետք է լիներ «ճոխ ու վսեմ»[7]:

Պոեմում ակնհայտ է ստորադասական երկրորդ ապառնու բայածների գերակշռությունը առաջին ապառնու բայածների համեմատությամբ: Ստորադասական եղանակի բայածները գործածված են տարբեր իմաստներով, որոնց քննությունը կներկայացնենք ստորև: Նարեկացին մտքի և սրտի ամենաբուռն հուզմունքով է գրում յուրաքանչյուր տողը: Բարդ է մարդու ինքնաճանաչման, իր մեղսունակության գիտակցման, դրանից ազատվելու և ինքնամաքրման այն ճանապարհը, որ ուղղված է դեպի Լույսը, Անեղծը, դեպ Աստված: Ուստի տիրապետողը պետք է լինի ըղձական ապառնու իմաստով ստորադասական երկրորդ ապառնու բայածների գործածությունը: Նրանք այս իմաստով կիրառված են ըղձական խոսքում, երկբայական և հարցական նախադասություններում:

«Եւ արդ, յայս պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ
<u>Ամաչեսցէ</u> սատանայ ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց,
<u>Տանջեսցի</u> եւ <u>հաւածեսցի</u>
Հեռացեալ եւ արտաքս առաքեալ» (357)[8]

(Սովորաբար ըղձական ապառնու բայածների թարգմանությունը ուղեկցվում է թող բառով[9]):

Երկբայական նախադասություններն ուղեկցվում են թերևս, գուցէ բառերով:

«Թերևս զոեսցէ ինձ ամենագէտն» (328)

Գուցէ առ նմին խզեալ համառա ւտ

Զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ,

Յորմէ ընտրութիւնն ապագործ եդեալ՝

Զսահմանն յաւիտենական բանտեսցէ»(349)

Հարցական նախադասություններում այս իմաստով գործածության դեպքում ակնհայտ է հռետորական հնչերանգը.

Եւ արդ, զո՞ր յաւտնեցիս

Եւ յաղագս ո՞յց նշանակեցիս

Եւ վասն ո՞րպիսեաց ճառեցիս

Եւ զո՞րքան ծածկեալս մերկացուցիս

Եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց...(353)

Հարցական խոսքն ուղեկցվում է հարցում արտահայտող տարբեր բառերով . զիա՞րդ, ո՞րպէս, ընդէ՞ր ևն:

«Եւ զիա՞րդ ասացիս...

Եւ ի՞բր անուանեցայց...

Եւ որպէ՞ս նոյեցայց...

Եւ ընդէ՞ր համբաւեցայց...

Կամ որո՞վք զուցայց...»(326):

Ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերը ըղձական ապառնու իմաստով գործածված են ոչ միայն նախադասության թելադրանքով, այլև նախադասության կառուցվածքի պահանջով:

Ամենատարածված կիրառությունը պայմանական խոսքում նրանց գործածությունն է, որոնցում ստորադասականի բայաձևերը հանդես են գալիս թէ, եթէ շաղկապներով սկսվող երկրորդական նախադասության ստորոգյաների պաշտոնում.

«Եթէ եւեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սովաւ

Ընկա՛լ կենդանեաւք վասն քո, գթած, եւ զիս ընդ նոսա»(257):

Եթէ վտանգ մահու անձնական ցաւոց զոք աաշառեսցէ.

Գտցէ փրկութիւն սովաւ առ ի յոյս կենաց՝

Յաղաւթելն առ քեզ, կեցուցիչ»(258):

Այս գործածությունները կարող են ընդգրկել ամբողջ գլուխներ, օրինակ՝ ԺԹ գլխի Բ ենթագլուխը, ուր պայմանի պարագա երկրորդականները սկսվում են թէ շաղկապով.

«Թէ դիւաց չարաց մատնեսցես,

Թէ գազանաց ժանեաւք մաքրեսցես,

Թէ հողմով ցասման հոսեսցես...

Վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտական գոլ սոցա »(316-317)

Ինչպես երևում է օրինակներից, գլխավոր նախադասությունների ստորոգյալներն ունեն բազմակերպ արտահայտություն. ընկալ (հրամայականի բայաձևը՝ հրամայականի իմաստով), գտցէ (երկրորդ ապառնու բայաձևը՝ ըղձական ապառնու իմաստով), վկայեմ (ներկայի բայաձևը՝ պայմանական ապառնու իմաստով):

Նարեկացու պոեմում ակնհայտ է սահմանական ներկա ժամանակի բայաձևերի լայն կիրառությունը ստորադասական ապառնու զանազան իմաստներով[10]: Սա մեկնաբանվում է նրանով, որ գրաբարի ներկայի բայաձևերի՝ ստորադասականին բնորոշ իմաստներով գործածություններն այնքան հաճախադեպ էին, որ հիմք էին հանդիսանալու XII դարում արդեն այդ բայաձևերի գլխավոր քերականական իմաստների փոփոխության և ըղձական եղանակի ձևավորման[11]: Մյուս կողմից Նարեկացին ակնհայտորեն դիմել է ձևերի բազմազանության՝ բանաստեղծական խոսքի թելադրանքով: Այսպես ԻԷ գլխի Ը ենթագլխում ըղձական ապառնու իմաստով գործածվել է ստորադասական առաջին ապառնու յոթ բայաձև, երկրորդ ապառնու տասը բայաձև և ներկայի յոթ բայաձև, և ներկայի քսանչորս բայաձև գործածված է պայմանական և հարկադրական ապառնիների իմաստով, որոնք հետևանքի իմաստ արտահայտող գլխավոր նախադասության ստորոգյալի պաշտոնում են հանդես գալիս.

«Եթէ հայեսցիս... կողկողիմ,

Եթէ լուիցես՝ հառաչեմ,

Եթէ անսայցես՝ աղերսեմ,

Եթէ ներեսցես՝ աղաչեմ...»(351-352)

Հաճախադեպ են նպատակի պարագա երկրորդական նախադասություններում ստորադասական երկրորդ ապառնու գործածությունները. նրանք սկսվում են զի, ոռաէսգի շաղկապներով.

«Վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ,

Զի դու առատապէս ընջեսցես աւրհնեալ»(355)

«Յանդիմանեցից զիս ինքն ինձէն...

...: Որպէս զի յանձնառական յայսմ...

... Միանգամայն իսպառ սոբեցայց աւրհնեալ հրամանաւ էիդ»(374)

Ժամանակի պարագա երկրորդականներում նույնպես գործածվում է ստորադասական երկրորդ ապառնին՝ ըղձական ապառնի իմաստով.

«Վայ ինձ առ ճեպ տագնապի ահի պակուցման,

Յորժամ առագաստին մուտն ժանեսցի»(274):

«Մատեան ողբերգութեան» պոեմում ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերը հաճախ են հանդիպում հրամայականի իմաստով:

Այս իմաստով կիրառությունները ևս ունեն իրենց որոշակի ոճական արժեքն այնքանով, որ նրանք գործածվում են հրամայական եղանակի բայաձևերի հետ, օրինակ՝ ԺԲ գլխում Գ ենթագլուխն սկսվում է հրամայականի բայաձևերով, և միայն վերջին հինգ տողն է կառուցվում ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերով, որոնք գործածված են հրամայական եղանակի իմաստով.

«Ամրացո՛ քո աջովդ զհանգստեան խշտի.

Մաքրեսցե՛ս ի խաղբից զծածկարան անկողնոյս,

Պահեսցե՛ս քո կամաւքդ զտառապեալ անձն ոգւոյս,

Անխարդախ առասցե՛ս զքո շնորհեալ շունչ մարմնոյս»(291)

Սրան հաջորդող գլուխն ամբողջությամբ կառուցվում է հրամայականի բայաձևերով: Կամ ԺԷ գլխի Ա ենթագլխում արգելական հրամայականներից հետո ավարտվող միտքն արտահայտվում է ստորադասականի բայաձևով՝ «Մի՛ ուժգնապէս վառեսցիս առ հողս»(307):

Ճիշտ է նկատել Վ.Առաքելյանը, որ «երկրորդ ապառնին Նարեկացու մոտ գործ է ածվում իբրև հորդորական հրամայական»[12]: Այս բայաձևերը

խոսքին հաղորդում են մեղմ շեշտվածություն, որի լավագույն օրինակն է նրանց գործածությունը ԿՁ գլխի Գ ենթագլխում (տասնհինգ բայածև):

Հաճաճախադեպ են ստորադասական երկրորդ ապառնու բայածևերի գործածությունները հարկադրական ապառնու իմաստով.

«Եւ արդ, զի՞նչ առոջեսցես անձն իմ կորուսեալ

Կամ ու՞ր թաքիցես , կամ զիա՞րդ ապրեսցիս.

Կամ ո՞րպէս ելցես ի մեղացդ բանտէ,...»(275)

Կամ՝

«...Խոստովանեալ՝ քեզ տարածեցից աստված իմ եւ տէր...»(279)

Հետաքրքիրն այն է ,որ այս մտքին նախորդում է ներկայի բայածևով արտահայտված գործողություն, որ ընկալվում է հարկադրական ապառնու իմաստով, ապա աստիճանաբար գալիս է մտքի խտացում, թվարկվող գործողությունների աստիճանական իմաստային սաստկացում, և այդ ամբողջը արտահայտելու համար հեղինակը որոշակի արվեստով է օգտագործում գրաբարի բայածևերը՝ ներկայի բայածևերից հետո անցնում է ստորադասական երկրորդ ապառնու բայածևերի. բոլորն էլ ընկալվում են հարկադրական ապառնու իմաստով:

Ստորադասական եղանակի բայածևերի իմաստային նրբերանգների համար էական դեր է կատարում Նարեկացիական ոգին. հատկապես նախադասության բովանդակությամբ թելադրված կառույցներում տվյալ բայածևի գործածությունը հարկադրական, ըղձական ու պայմանական ապառնիների իմաստներով պայմանավորվում է ասելիքի խտացման աստիճանով: Տիրապետող են ըղձական և հարկադրական ապառնու իմաստով գործածությունները:Պայմանական ապառնու իմաստով կիրառությունները ևս պայմանավորված են նախադասության բովանդակությամբ և կառուցվածքով:

«... Այնպէս այուեսցին մեղաւորք ի բորբոքեալ բոցոյն»(493):

Կամ՝ «Թէ՝ Մահ հովուեսցէ զնոսա»(493):

Բնականաբար ամենատարածված կիրառությունը պայմանական խոսքում նրանց գործածությունն է իբրև գլխավոր նախադասության ստորոգյալ: Այսպիսի լավագույն օրինակ է ԿՁ գլխի Ե ենթագլուխը, ուր ստորադասական երկրորդ ապառնու բայածևերը գործածված են երկրորդական նախադա-

սության մեջ՝ ըղձական ապառնու, իսկ գլխավորում՝ պայմանական ապառնու իմաստներով:

«Եթէ մոլեսցի զվստահութիւն ծեռինս կապել...

Ձնա չարչարեալ ոմբերանեսցէ»(509-510):

Այս գլխում ըղձական ապառնու իմաստով գործածված է ստորադասական երկրորդ ապառնու տասը բայածև և ստորադասական առաջին ապառնու մեկ բայածև, իսկ պայմանական ապառնու իմաստով գործածված է ստորադասական երկրորդ ապառնու տասներեք և ներկայի՝ մեկ բայածև:

Հետևանքի իմաստ արտահայտող գլխավոր նախադասություններում ստորադասական երկրորդ ապառնու բայածևերն արտահայտում են ոչ միայն պայմանական ապառնու իմաստ, այլև հրամայականի («Եթէ գրեսցի եւ ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կիրս կենաց, Առասցես կամաւք քո, աւրհնեալ, եւ ինձ համարեալ»(257) և ըղձական ապառնու իմաստներ («Եթէ ամայի ի զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի. Սպասեսցէ սովիմբ առ ի նոյն դարձ նորոգողիդ»(258)):

Ստորադասական երկրորդ ապառնու բայածևերը գործածվում են նաև սահմանական ներկայի իմաստով, երբ խոսքը դառնում է խաղաղ. չկան պոռթկումներ, այլ կա հանգիստ զրույց: Սրանք հանդիպում են «Աստվածաշնչից» կատարված մեջբերումներում: «Ըստ բանին Յոբայ, ի կամս հաւատարիմս, Որ սասանես զերկիր եւ զսիւնս նորին ի հիմանց... Դիւրապէս ունել կամ թողուլ դոյնպէս զաւոեսցես »(497):

Այս իմաստով այն հիմնականում գործածվում է ներկայի բայածևերի հետ: Կառույցների մի մասում երկրորդ ապառնու բայածևը ընկալվում է ներկայի կամ պայմանական ապառնու իմաստով,

«Ցուցեր մարգարէիւն, թէ՝ Ձաւրհնութիւն ստասցի, որ զաւրէնս դնէ»(501). (Օրհնություն է ստանում (կստանա)նա , ով հաստատուն է): Ստորադասական առաջին ապառնու բայածևերի գործածությանը Նարեկացին քիչ է դիմում: Նրանք հանդես են գալիս իմաստագործառական այն առանձնահատկություններով, որոնք բնորոշ էին երկրորդ ապառնու բայածևերին:

«Նուիրեսցի վասն իմ այսու մատենիս պաղատանք նոցին,

եւ բանիւ այսու հեծութիւն նոցին ընդ իմ խնկեսցի,

Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան՝
Շնորհ լուսոյ քո մտեալ բնակիցէ»(257):
«Ո՞վ է, որ ձգիցէ զձեռն իւր յածեալ տեառն եւ քավեսցի»(631)
«Եթէ ի մոխիր երկրի թաւալել ձեռն բերիցէ
Երեսացն աստուծոյ ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ»(509)

Նարեկյան յուրաքանչյուր տողը գրված է աստվածային ոգեշնչումով, և բնական է, որ Նարեկացու հոգու և մտքի թռիչքը արտահայտող քերականական համազոր ձևեր էին պետք, ձևեր, որոնք նույնքան ինքնաբուխ պետք է լինեին, որքան ապաշխարանքի եկող, ինքնամաքրման միջոցով դեպի Աստվածային մաքրությունը ձգտող մարդու հույզերը կարող էին թելադրել: Ահա թե ինչու այդ հույզերի արտահայտման համար քերականական ոչ մի սահմանափակում չկա. գրաբարը հանդես է գալիս իր եղանակաժամանակային ձևերի ողջ հարստությամբ: Իբ գլխի Դ ենթագլխում հեղինակը ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերի հետ պայմանական և հարկադրական ապառնիների իմաստների արտահայտման համար գործածել է իցէ + անորոշ դերբայով կառույցները, որոնք որոշակի հնչերանգ են տալիս խոսքին. «Իցէ՞ արդեւք տեսանել... Իցէ՞ ակն ունել... Արդեւք տեսի՞ց... Իցէ՞ արդեւք թէ տեսից... ևն»(341):

Ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների բայաձևերը «Մատեան ողբերգութեան» պոեմում հանդես են եկել հետևյալ հաճախականությամբ. ըղձական ապառնու իմաստով գործածված է ստորադասական երկրորդ ապառնու 568 բայաձև և առաջին ապառնու 36 բայաձև, հարկադրական ապառնու իմաստով՝ ստորադասական երկրորդ ապառնու 101 բայաձև և առաջին ապառնու 10 բայաձև, պայմանական ապառնու իմաստով՝ ստորադասական երկրորդ ապառնու 106 բայաձև և ստորադասական առաջին ապառնու 8 բայաձև և հրամայականի իմաստով՝ ստորադասական երկրորդ ապառնու 125 բայաձև և ստորադասական առաջին ապառնու 8 բայաձև: Ինչպես երևում է վիճակագրությունից[13], ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերը անհամեմատելիորեն գերակշռող են, և նրանց՝ ըղձական ապառնու իմաստով գործածությունների այդպիսի հաճախականությունը պայմանավորված է նյութի բովանդակությամբ և բանաստեղծական խոսքի պահանջներով:

Նարեկացին միևնույն եղանակաժամանակային իմաստի արտահայտման համար բայաձևի ընտրության հարցում ազատ է ու անկաշկանդ:

Ծանոթագրություններ

1. Տես՝ Հ.Ավետիսյանի «Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ» հոդվածը: Բամբեր Երևանի համալսարանի, հ. I, Ե, 1985թ., էջ 199-204:
2. Տես՝ նշված հոդվածը, ինչպես նաև «Հայոց լեզվի պատմական քերականություն» հ. II, Ե, 1972թ. էջ (308-324):
3. Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ քերականութիւն, Վաղարշապատ, 1907թ., էջ 21:
4. Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ քերականություն, Ե, 1936թ., էջ 28:
5. Ս. Ղազարյան, Գրաբարի դասագիրք , Ե, 1951թ., էջ 66, «Հայոց լեզվի համառոտ պատմություն», Ե, 1981թ. էջ 111-115: Մանրամասները տես Հ.Ավետիսյանի՝ նշված հոդվածում:
6. Տես՝ Ա. Յուզբաշյան «Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործառական հետագա զարգացումը» Ե, 2000թ., էջ 21-50:
7. Մ.Մկրյան , Գրիգոր Նարեկացի, Ե, 1955թ., էջ 241:
8. Սկզբնաղբյուր՝ «Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան», Ե., 1985թ.:
9. Օգտագործված է Վազգեն Գևորգյանի թարգմանությունը. «Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության » ,Ե., 1979թ.:
10. Տես՝ Ա.Յուզբաշյան, «Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործառական հետագա զարգացումը» Ե, 2000թ., էջ 45:
11. Տես՝ Ա.Յուզբաշյան, նշված աշխատության 45, 58-67 էջերը:
12. Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե, 1975թ., էջ169:
13. Այն բայաձևերը, որ ընկալվում են մի քանի իմաստներով, վիճակագրության մեջ չենք մտցրել: